British Embassy Yerevan

Շվեդիա Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP

UKaid from the British people

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

WFD
WESTMINSTER FOUNDATION FOR DEMOCRACY

oxYGen

Գենդերային զգայուն մոտեցումները COVID-19-ի դեմ պայքարում. խորհրդարանի դերը

Քաղաքականության ամփոփագիր

2021

Քաղաքականության ամփոփագիրը պատրաստվել է ՕքսԵՋԵՆ հիմնադրամի կողմից «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է ուժեղացնել Հայաստանի օրենսդիր մարմինը, որպեսզի այն իրականացնի օրենքների մշակման, վերահսկողության և ներկայացուցչականության ապահովման իր առանցքային գործառույթները: Ինչպես նաև, աջակցել խորհրդարանին, որպեսզի պետական կառավարման համակարգում կիրառվի նոր գործիքակազմ, որը կնպաստի աշխատանքի որակի բարելավմանը, թափանցիկության և ներառականության ապահովմանը, գենդերային զգայուն քաղաքականությունների մշակմանը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագիրը համաիրականացվում է ՕքսԵՋԵՆ հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ՝ ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ:

Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԶԾ-ի կամ ծրագրի այլ գործընկերների տեսակետները:

Թեմայի արդիականությունը

Ողջ աշխարհում և Հայաստանում համավարակի սկզբից ի վեր արված վերլուծությունները ցույց են տալիս, որ համավարակն ազդում է բոլորի վրա և ամենուր, սակայն մարդկանց տարբեր խմբերի վրա այն ազդում է տարբեր կերպ՝ խորացնելով առկա անհավասարությունները, այդ թվում գենդերային անհավասարությունը, բացահայտելով սոցիալական, քաղաքական ու տնտեսական համակարգերի խոցելի տեղերը[1]:
Մասնավորապես, COVID-19-ը սոցիալ-տնտեսական բնույթի ավերիչ ազդեցություն է ունենում հատկապես կանանց վրա, ինչպես նաև բացասաբար է ազդում այն առաջընթացի վրա, որը մինչ այժմ արձանագրվել էր գենդերային հավասարության ու կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում:

Թեև միջազգային տարբեր կառույցներ համավարակի առաջին իսկ օրերից զգուշացրեցին կանանց վրա դրա հատուկ ազդեցության մասին, այդ մտահոգությունները դեռևս չեն ձևավորում այն որոշումները, որոնք ընդունվում են համավարակի դեմ պայքարի շրջանակներում:
Մինչդեռ ՄԱԿ-ի կանխատեսմամբ, «համավարակի պայմաններում գենդերային խնդիրներն անտեսելը ոչ միայն կխորացնի արդեն իսկ առկա անհավասարությունները, այլև կստեղծի նորերը»[2]:

Այս առումով կարևոր է, որ կառավարությունների արձագանքները համավարակին ի սկզբանե հաշվի առնեն այն անհամաչափ ազդեցությունները, որ դրանք ունենում են կանանց ու տղամարդկանց վրա:

Ըստ McKinsey ընկերության հետազոտության՝

- Ճգնաժամային պայմաններում կանայք 1.8 անգամ ավելի շատ են կորցնում իրենց աշխատանքը, քան տղամարդիկ, համապատասխանաբար, 5.7% և 3.1 %:
- Կանայք կազմում են աշխարհում համավարակի պատճառով աշխատանքը կորցրածների 54 %-ը:
- Համավարակի պայմաններում կանայք հայտնվել են առաջնագծում՝ իրենց ուսերին վերցնելով ընտանիքի խնամքի հետ կապված չվճարվող աշխատանքի 75%-ը, ինչն էլ բացասական հետևանք է թողնում աշխատաշուկայում կանանց մասնակցության ցուցանիշների վրա:

[1] Policy Brief: The Impact of COVID-19 on Women, 9 APRIL 2020
https://www.un.org/sites/un2.un.org/files/policy_brief_on_covid_impact_on_women_9_apr_2020_updated.pdf
[2] Անտոնիու Գուտերեշ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

Իսկ այն հանգամանքը, որ ողջ աշխարհում կանայք՝ մեծամասնություն կազմելով առողջապահության, կրթության, սոցիալական ծառայությունների ոլորտներում, գտնվում են համավարակի դեմ պայքարի առաջնագծում և կարևոր դեր են խաղում ճգնաժամի լուծման գործում, միայն հաստատում է, որ համավարակն ու դրա հետևանքները հաղթահարելուն ուղղված ցանկացած միջոցառում պետք է ներառի գենդերային զգայուն մոտեցումներ: Այդ համատեքստում կարևորվում է նաև խորհրդարանների դերը[3], որոնք իրենց օրենսդրական և վերահսկիչ գործառույթների շրջանակում կարող են համավարակի ազդեցությունը մեղմելու կոնկրետ գործողություններ կատարել՝ դրանով իսկ լավագույնս ապահովելով իրենց ընտրողների շահերի պաշտպանությունը:
Սույն ամփոփագրի նպատակն է նպաստել Հայաստանում համավարակի դեմ պայքարում գենդերային զգայուն մոտեցումների ներդրմանը՝ մատնանշելով խորհրդարանի հատուկ դերակատարումն այդ հարցում: Ամփոփագիրը նպատակաուղղված է նաև այնպիսի քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, որը կապահովի կանանց մասնակցությունը համավարակի հետ կապված որոշումների կայացմանը:

COVID-19-ի առաջին դեպքը Հայաստանում գրանցվեց 2020թ. մարտի 1-ին, իսկ վարակի տարածման դեպքերն սկսեցին գրանցվել **2020թ. մարտի 11-ից**, ինչից հետո հանրապետության ողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարվեց, որը սեպտեմբերի 11-ից փոխարինվեց կարանտինի ռեժիմով:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքով հանրապետությունում գրանցվեց կորոնավիրուսով հիվան-դացության կտրուկ աճ:

2021թ.-ի հունվարի 11-ին կարանտինի ռեժիմը որոշ մեղմացումներով երկարաձգեց ևս 6 ամսով՝ մինչև **2021թ.-ի հուլիսի 11-ը:**

Ըստ պաշտոնական տվյալների՝ **2021թ. հունվարի 11-ի** դրությամբ Հայաստանում կորոնավիրուսով վարակվածները կազմում էին բնակչության 5.5%-ը:

[3] https://www.ipu.org/gender-and-covid-19-guidance-note-parliaments?fbclid=IwAR03xOOIETuv0BKhjxAvuXV5bFqQCLmWorKOslfq8KRHoHgg_J480FXZOlo

Խնդրի հիմնավորումը Հայաստանի պայմաններում

Հայաստանում 2020թ.-ի մայիս-հուլիս ամիսներին անցկացված COVID-19-ի սոցիալ-տնտեսական ազդեցության արագ գնահատման հետազոտությունը[4] փաստում է, որ համավարակի հետևանքով Հայաստանի տնտեսությունը բազմակի ու բազմաշերտ ցնցումներ է ունեցել, իսկ երկրի բնակչությունը՝ բախվել լուրջ խնդիրների, ընդ որում ոչ միայն առողջական բնույթի[5] և բուժօգնության հասանելիության հետ կապված դժվարությունների: Առողջապահական ճգնաժամի ցնցումները և հարկադիր սահմանափակումները հանգեցրեցին բիզնես ձեռնարկությունների գործունեության դադարեցմանը, տնային տնտեսությունների եկամտի կորստին և եկամտային հեռանկարների անորոշությանը, վատթարացրեցին մարդկանց սոցիալական բարեկեցության մակարդակը:

Հետազոտության ընթացքում կիրառված «Արագ գենդերային վերլուծության» գնահատման գործիքը[6] թույլ տվեց բացահայտել, որ, ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, COVID-19-ի ազդեցություններից շատերն ամենաուժգին հարվածը հասցնում են հատկապես կանանց՝ խնդիրներ առաջացնելով տարբեր ոլորտներում: Հայաստանում կանանց առավել մեծ խոցելիությունը համավարակի պայմաններում հաստատում են նաև այլ վիճակագրական տվյալները և փորձագիտական մի շարք գնահատականները [7].

Տնտեսական ոլորտում կանանց առավել մեծ խոցելիությունը պայմանավորված է նրանով, որ կանայք ավելի շատ են ներկայացված համավարակի պատճառով ամենաշատ տուժած սպասարկման, մանրածախ առևտրի և սոցիալական ծառայությունների ոլորտներում: Կանայք հատկապես խոցելի են կրճատումների և ապրուստի միջոցների կորստի համար: Ոչ ֆորմալ ոլորտի շատ աշխատատեղեր, այդ թվում՝ տնային աշխատողներ, խնամակալներ, գյուղատնտեսությունում զբաղվածներ, հիմնականում կանանց աշխատատեղեր են, որոնք, որպես կանոն, դուրս են մնում սոցիալական ապահովության ծրագրերից: Աշխատանքը կորցնելը հատկապես ցավոտ է անդրադառնում միայնակ ծնող հանդիսացող կանանց և նրանց ղեկավարած տնային տնտեսությունների վրա: Այդ ամենը հանգեցնում է կանանց տնտեսական հնարավորությունների էական սահմանափակմանը:

[4]COVID 19 համավարակի սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման (USAG) արդյունքները, 2020 Գնահատմանը մասնակցել է 7,500 մարդ Հայաստանի 10 մարզերից եւ մայրաքաղաք Երևանից: Գնահատումը իրականացվել է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից ՀՀ կառավարության աջակցությամբ: https://bit.ly/3q8wM1S

[5] Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի մասին ամենօրյա ռեժիմով թարմացվող պաշտոնական վիճակագրությունը ՀՀ առողջապահության նախարարության կայքում https://ncdc.am/coronavirus/confirmed-cases-by-days/ և Թարմացվող գրաֆիկներ. Covid-19-ի հաստատված դեպքերը ՀՀ-ում https://ampop.am/covid19-coronavirus-dynamic-statistics-in-armenia/

[6] The impact of COVID-19 on women's and men's lives and livelihoods in Europe and Central Asia: Preliminary results from a Rapid Gender Assessment https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2020/07/the-impact-of-covid19-on-womens-and-mens-lives-and-livelihoods

[7] Կանայք համավարակի դեպ պայքարում , «ՀԱՎԱՍԱՐ» տեղեկահգիր http://project2923331.tilda.ws/

Ընտանիքի անդամների խնամքի աշխատանքի ծավալի զգալի մեծացումը, ինչն ավելի է խորացնում տնային աշխատանքի բաժանման մեջ առկա գենդերային անհավասարությունը: Ըստ էության, երեխաներ ունեցող կին աշխատողներն ունեն մի քանի տեսակի ծանրաբեռնվածություն՝ հեռավար աշխատանք (եթե դեռ ունեն), երեխաների խնամք, տնային ուսուցում, տարեցների խնամք և տնային աշխատանք: Խնդիրն առկա է նույնիսկ կարանտինի մեղմացման պայմաններում՝ նախադպրոցական հիմնարկների անհասանելիության պատճառով: Այս հիմնախնդրի հանգուլածումը մեծապես կախված է նրանից կդառնա՞ արդյոք ստեղծված իրավիճակը հնարավորություն տնային գործերն ու երեխաների խնամքը կանանց և տղամարդկանց շրջանում ավելի լավ բաշխելու համար, որպեսզի երկուսն էլ կարողանան շարունակել իրենց մասնագիտական կյանքը, թե՞ հակառակը՝ կանայք կշարունակեն ստանձնել չվճարվող տնային և ծնողական աշխատանքների մեծ մասը, վտանգի ենթարկելով իրենց վճարվող աշխատանքը:

Կանանց՝ COVID-19-ով առավել հաճախ վարակվելու միտումը[8], որն արձանագրվել էր Հայաստանում՝ համավարակից սկզբից ի վեր, պայմանավորված է նրանով, որ կանայք ավելի մեծ թիվ են կազմում վարակվելու առումով ռիսկային խմբերում և աշխատանքի ոլորտներում[9]:

Բացի այդ, կանայք տանն էլ են կատարում կենցաղային աշխատանքների հիմնական մասը, ներառյալ՝ ընտանիքի բոլոր անդամների խնամքը, գնումները, գնած ապրանքների ախտահանումը և մշակումը...

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալներով՝

- Կրթության ոլորտի 79 %-ը կանայք են,
- Առողջապահության և սոցիալական սպասարկման ծառայությունների ոլորտում 84%-ը կանայք են,
- Նախարարությունների աշխատակազմերի 59%-ը կանայք են:

Դրա հետ մեկտեղ, 2021թ-ի հունվարի 10-ի դրությամբ՝ COVID-19-ից մահերի վիճակագրությունը Հայաստանում ցույց է տալիս, որ մահածացների 54%-ը եղել են տղամարդիկ, 46%-ը՝ կանայք[10], ընդ որում այդ օրինաչափությունն առկա է ողջ աշխարհում[11]: ԱՀԿ-ի տվյալների բազայում՝ կորոնավիրուսից տղամարդկանց մահացության դեպքերը 58% են կազմում: Ըստ հետազոտողների[12], տղամարդկանց ավելի բարձր մահացության պատճառ են հանդիսանում կենսաբանական ու սոցիալական վարքի առանձնահատկություններն և այլ գործոններ, որոնց պատճառով տղամարդիկ ավելի ռիսկային գոտում են հայտնվում:

10] COVID-19-ից մահերի վիճակագրությունը Հայաստանում. տարիք, սեռ, ժամանակագրություն https://ampop.am/covid-19-deaths-in-armenia/
[11] Ինչո՞ւ է կարևոր սեռով տարբերակված վիճակագրությունը http://project2923331.tilda.ws/page13670022.html
[12] https://www.cbsnews.com/news/coronavirus-gender-gap-men-more-likely-to-die-covid-19-women/

- **Առողջապահության ոլորտում զբաղված կանանց մեծ մասնաբաժինը** (85%-ը) հանգեցնում է վարակվելու ավելի մեծ ռիսկի: Եթե ողջ աշխարհում վարակման դեպքերի մինչև 10 տոկոսը բուժաշխատողներ են, Հայաստանում 2020 թվականի մայիսի դրությամբ վարակման դեպքերի 13.4%-ը արձանագրվել էին բուժաշխատողների մոտ (բժիշկ, բուժքույր, մայրապետ): COVID-19-ի հակամարմինների առկայությունը ստուգող շճաբանական հետազոտության արդյունքների[13] համաձայն՝ հակամարմինների տարածվածությունը բուժաշխատողների շրջանում միջինը մոտ 3 անգամ գերազանցում էր նախկինում վիրուսի առկայությունը ստուգող ՊՇՌ թեստով հաստատված COVID-19-ի տարածվածությունը.

- **Մայրական առողջության պահպանման ծառայությունների սահմանափակումը** համավարակի պայմաններում, երբ բոլոր ծառայություններն ուղղված են համավարակի հետ կապված բժշկական կարիքներին, մեծ վտանգ է ներկայացնում կանանց համար: Համավարակի ազդեցության արագ գնահատման տվյալներով[14], դժվարություններ են ունեցել հատկապես հղի կանայք, ովքեր ունեն մշտական առողջապահական ծառայությունների կարիք:

- **Ընտանեկան բռնության դեպքերի աճը համավարակի ընթացքում** ցույց տվեց, որ հիվանդության դեմ պայքարի համար անհրաժեշտ միջոցները՝ մեկուսացումը, սոցիալական հեռավորությունը, տեղաշարժման սահմանափակումները, հենց այն պայմաններն են, որոնց պարագայում բռնարարները շատ ավելի ազատ են բռնություն գործադրելու համար:

Հատկապես ծանր վիճակում հայտնվեցին մինչ այդ էլ ընտանեկան բռնության ենթարկված անձինք, որոնց համար տունն ամենևին անվտանգ միջավայր չէր, և չկարողանալով հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ՝ նրանք չէին կարող ակնկալել օգնություն և աջակցություն:

Աշխարհի երկրներում՝

համավարակի սկզբից ի վեր՝ լոքդաունի ընթացքում արձանագրվեց կանանց նկատմամբ բռնության աճ՝ միջինը 30%-ով:

Հայաստանում՝

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի տվյալներով, խիստ կարանտինի շրջանում արձանագրվել էր ընտանեկան բռնության առաջնային զանգերի 30% (մարտին) և 50% (ապրիլին) աճ: Ընդ որում, զանգահարել են թե՛ բռնության հետ կապված խորհրդատվության, թե՛ սոցիալական աջակցության համար:

[13] https://www.moh.am/#1/3043
[14] COVID 19 համավարակի սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման (ՍՏԱԳ) արդյունքները, 2020

Հայաստանում իրականացրած «COVID-19-ի համավարակի ժամանակ պետության արձագանքն ընտանեկան բռնությանը» [15]արագ գնահատումը բացահայտեց մի շարք խնդիրներ՝ կապված արտակարգ դրության իրավական ռեժիմի ընթացքում ընտանեկան բռնությանը պետական և հասարակական կառույցների արձագանքի և այդ կառույցների կարիքների հետ:

Որոշումների ընդունման մակարդակում կանանց ցածր ներկայացվածության հետևանքով, ողջ աշխարհում և Հայաստանում համավարակի դեմ միջոցառումներ մշակելու և իրականացնելու գործընթացում առանցքային որոշումներ կայացնողների գերակշիռ մասը տղամարդիկ են:

Դրա հետ մեկտեղ, միջազգային մամուլի ուշադրության կենտրոնում հայտնվեցին մի շարք երկրներ ղեկավարող կին առաջնորդներ, ում ճգնաժամային կառավարման արդյունավետությունը բարձր գնահատանքի արժանացավ համավարակին արագ արձագանքելու և այլ երկրների համեմատությամբ մահվան ցածր ցուցանիշներ արձանագրելու շնորհիվ:

Ավելին, ՄԱԿ-Կանայք կառույցի մշակած «COVID-19-ը և կանանց առաջնորդությունը. Արդյունավետ արձագանքից մինչև ավելի լավի կառուցումը» ամփոփագրում շեշտադրվում է այն փաստը, որ երկրագնդի ողջ տարածքում կանայք այն հաստատությունների ղեկին են, որոնք իրականացնում են արդյունավետ և ներառական COVID-19-ի պատասխաններ՝ որոշումների կայացման ամենաբարձր մակարդակներից մինչև առաջնագծում ծառայությունների մատուցում:

Պարետատան կազմում՝

Հայաստանում համավարակի պայքարը համակարգող պարետատան անհատական կազմում ընդգրկված էին կառավարության 15 ներկայացուցիչներ, որոնց թվում ընդամենը երկու կին:

Վերը նշված տվյալներն ու փաստերը հաստատում են Հայաստանում գենդերային անհավասարության խորացման փաստը, հետևապես՝ համավարակի դեմ պայքարում գենդերային զգայուն մոտեցումների անհրաժեշտությունը: Հաշվի առնելով Հայաստանի խորհրդարանական կառավարման երկիր լինելու փաստը, հարց է առաջանում. ինչպիսի՞ լուծումներ կարող են տալ Ազգային ժողովն ու պատգամավորները համավարակի անհամաչափ ազդեցությունները մեղմելու և դրա հետ պայքարում գենդերային զգայուն մոտեցումներ ներդնելու հարցում:
Արժեքավոր ռեսուրս է հանդիսանում այս հարցում «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում արդեն իսկ հրապարակված «Կանայք համավարակի դեմ պայքարում» [16] «Հավասար» տեղեկագրի հատուկ թողարկումը:

[15] «COVID-19-ի համավարակի ժամանակ պետության արձագանքն ընտանեկան բռնությանը» արագ գնահատում https://bit.ly/3slrmwa
[16] http://project2923331.tilda.ws/

Միջխորհրդարանական միության գնահատմամբ.

- Խորհրդարաններում գենդերային քաղաքականության ուժեղացումը ոչ միայն դրական կանդրադառնա այսօր ընդունված որոշումների և միջոցառումների վրա, այլև ապագայում դրական ազդեցություն կունենա խորհրդարանական կառավարման առումով:
- Եթե այսօր խորհրդարանները կարողանան նպաստել բոլորի համար առողջապահական ծառայությունների ապահովմանը, ապա դա կունենա երկարաժամկետ օգուտներ բոլորի համար թե՛ այսօր, թե՛ ապագայում:
- Եթե խորհրդարաններն առիթն օգտագործեն վիճարկելու, կոտրելու առկա կարծրատիպերը, ինչպես նաև տնային տնտեսություններում աշխատանքի ավանդական բաժանումը, ապա դա կնպաստի ապագայում կանանց և աղջիկների տնտեսական հզորացմանը:
- Ճգնաժամային իրավիճակումկանանց՝ հասարակության, տնտեսության մեջ ունեցած էական դերի փաստաթղթավորումը կօգնի, որ այն հետագայում առավել համակարգված հաշվի առնվի ու ճանաչվի:

Առաջարկություններ

Ակնհայտ է, որ COVID-19-ով պայմանավորված ճգնաժամը բերում է լուրջ մարտահրավերներ՝ կապված հասարակությունում առկա անհավասարությունների
խորացման հետ: Բայց միաժամանակ ճգնաժամը կարող է բացել նոր հնարավորությունների պատուհաններ՝ ուղղված անհավասարությունների վերացմանն ու երկարաժամկետ հեռանկարում ավելի արդար ու ավելի կայուն հասարակության կայացմանը: Նման հանգուցալուծումը մեծապես պայմանավորված է խորհրդարանի դիրքորոշմամբ և ճգնաժամի գենդերային զգայուն կառավարման իրականացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերից:

Ըստ Միջխորհրդարանական միության կողմից հրապարակված և խորհրդարաններին հասցեագրված ուղեցույցի, [17] այդ քայլերը տեղավորվում են հետևյալ մոտեցումների շրջանակում.

[17] Gender and COVID-19: A guidance note for parliaments https://www.ipu.org/gender-and-covid-19-guidance-note-parliaments?fbclid=IwAR03xOOIETuv0BKhjxAvuXV5bFqQCLmWorKOslfq8KRHoHgg_J480FXZOlo

- COVID-19-ի պայմաններում կանանց մասնակցությունն ու առաջնորդությունը խորհրդարաններում և այլ կառույցներում որոշումների կայացման գործընթացներում
- Գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող օրենսդրություն
- Համավարակի հաղթահարման ուղղությամբ կառավարության գործողությունների վերահսկողության իրականացում՝ գենդերային զգայունության տեսանկյունից
- Պատգամավորների դերը COVID-19-ի և դրա հետևանքների մասին իրազեկման և տեղեկացվածության բարձրացման գործում

Նշված մոտեցումները համապատասխանում են ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրում ամրագրված գերակայություններին, նպատակներին և գործողություններին և ենթադրում են հետևյալ քայլերի իրականացում.

- Ապահովել խորհրդարանի ներսում համավարակին վերաբերող որոշումների կայացման գործում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը, այդ թվում՝ համավարակով պայմանավորված նոր ստեղծվող աշխատանքային խմբերում և հանձնաժողովներում:
- Օգտագործելով խորհրդարանի վերահսկիչ գործառույթը՝ պարզել ինչ չափով են ներգրավված կանայք ճգնաժամի հաղթահարմանն ուղղված որոշումների կայացման բոլոր մարմիններում՝ ստորաբաժանումներում, հանձնաժողովներում, աշխատանքային խմբերում և այլն:
- Ընտրողների հետ շփումների միջոցով նպաստել, որպեսզի կանանց կարծիքներն ու կարիքները լսելի լինեն խորհրդարանում և ներառվեն համավարակի վերաբերյալ խորհրդարանի հանձնաժողովների կայացրած որոշումներում և պատգամավորների օրենսդրական նախաձեռնություններում:
- Բացահայտել և ներկայացնել խորհրդարանի ամբիոնից այն բոլոր մարտահրավերները, որոնք վտանգ են ներկայացնում կանանց իրավունքների հնարավոր հետընթացի առումով: Դրա հետ մեկտեղ, մշտապես շեշտադրել համավարակի դեմ պայքարում կանանց դերն ու նախաձեռնությունների կարևորությունը՝ գրավելով կառավարության ու հանրության ուշադրությունը կանանց ներուժն արդյունավետ ներգրավելու խնդրի վրա:

[17] Gender and COVID-19: A guidance note for parliaments https://www.ipu.org/gender-and-covid-19-guidance-note-parliaments?fbclid=IwAR03xOOIETuv0BKhjxAvuXV5bFqQCLmWorKOslfq8KRHoHgg_J480FXZOIo

- Գնահատել կառավարության քաղաքականության, ձեռնարկած միջոցների հասցեականությունը՝ կանանց ու տղամարդկանց նկատմամբ խտրականությունը բացառելու տեսակետից:

- Կառավարության առջև բարձրացնել համավարակին և դրա հետևանքների արձագանքմանը վերաբերող՝ սեռով տարբերակված տվյալների պարտադիր հավաքագրման խնդիրը, հենվելով ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության[18] պահանջի վրա, այն է՝ «գենդերային տարբերակված, համակարգված և միասնական վիճակագրության վարում, այդ թվում՝ պետական ծառայություններ ստացող խմբերի վերաբերյալ»:

- Աջակցել կառավարությանը, որ COVID-19-ի արձագանքմանը և հետևանքների մեղմացմանը վերաբերող միջոցառումները և ազգային ռազմավարական ծրագրերը հիմնված լինեն սեռով տարբերակված տվյալների և հետազոտությունների վրա: Վերահսկել, որ առողջապահության և տնտեսության ոլորտների, հիվանդանոցների, բժիշկների, փոքր բիզնեսի, ինքնազբաղվածների, սոցիալապես անապահով ընտանիքների ու այլ խմբերի աջակցության ծրագրերի հիմքում դրվեն սեռով տարբերակված տվյալները, հետազոտությունները և գենդերային վերլուծությունների արդյունքները՝ դրանով իսկ բարձրացնելով հանրային առողջապահական քաղաքականության և համաճարակը կանխելու միջոցների արդյունավետությունը:

- Գենդերային փորձաքննության պահանջ դնել նաև ոլորտը կարգավորող և շրջանառության մեջ գտնվող նոր օրենսդրական նախաձեռնություններին՝ կանանց և տղամարդկանց վրա դրանց ազդեցությունը գնահատելու և երկու սեռի խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով:

- Աջակցել նախաձեռնություններին, որոնք միտված են համավարակի պայմաններում ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրության բարելավմանը և առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

- Ուշադրություն և հետևողականություն ցուցաբերել ռիսկային խմբերի, այդ թվում համավարակից առավել տուժող կանանց խնդիրների նկատմամբ: Հանդես գալ նախաձեռնություններով, որոնք միտված են COVID-19-ի տնտեսական հետևանքները մեղմելուն՝ շեշտադրելով կանանց համար տնտեսական հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը:

- Ուշադրության կենտրոնում պահել նախադպրոցական հիմնարկների հասանելիության, ինչպես նաև աշխատող կանանց ու տղամարդկանց՝ ճկուն գրաֆիկով աշխատելու և վճարվող արձակուրդի հնարավորությունների ապահովման խնդիրները:

[18] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151906